

3. Փ. Ս. «Եւ զի էր առաւօտ, բացան գրուիք քաղաքին եւ մտեալ զօրն ի ներս ի քաղաքն» (Մեծ Սոկրատ՝ «Գոտեալք ի բաց զգրուես քաղաքին», 630): Ագաթ. 28. «Իբրեւ այդն գառաւօտն մերկացաւ՝ դրուիք քաղաքին բացան եւ զօրքն ամենայն առ հասարակ ի ներս» մտանէին:

4. Փ. Ս. «Բայց նոցա ոչինչ օգուտ գործեաց» (268): Ագաթ. 241. «Իսկ կամակոր ազգին (Հրէից) ... ոչինչ օգուտ գործեաց»:

5. Փ. Ս. «Յարգարէին զհարսանիոն ըստ օրինի քաղաքաց զերապոյծառ եւ առատարար» (720): Նորայր համեմատութեան կ'առնէ առ այս Ագաթ. 21. «Ըստ օրինաց թագաւորաց»: Բայց խմբագիրը կարող էր նկատի առած ըլլալ աւելի ձիւղ Եփրեմի Ա. 487. «Ոչ թագեցաւ ըստ օրինի քաղաքաց ի գերեզմանս թագաւորաց»: Թերեւս ա'յսպէս պէտք է ուղղել Ագաթ. «օրինաց»ը:

6. Կրնանք յիշել հոս նաեւ «այլ եւ արդեամբ՝ շնորհատուր պարգեւօք» (620): Ընդգծուած բառերը կը գտնենք գործածուած Կորնիւի, Փաւստոսի (Գ. 10) եւ Ագաթանգեղոսի (421) մէջ:

7. Փ. Ս. «Որ եւ այժմ արացէ Աստուած ազօթիւք բազմաճնուութեամբ՝ թագաւորին մերոյ բժշկութիւն» (էջ 735). «Այլ ազօթիւք Կրքոց բազմաճնուութեամբ եւ հաւատովք թագաւորին ի խաղաղութիւն փոխարկէր» (էջ 55): Յաճախապատում ԺԲ. 128. «Եւ որ այլ եւս են բարեգործութիւնք բազմաճնուութեամբ ազօթիւք եւ խնդրուածովք» (Նորայր, Մշակ, Թ. 217):

8. Փ. Ս. «Հաղորդս առնէր... սարսափելի եւ փրկական խորհրդոյն» (էջ 738): Յաճախապատում ԺԳ. 139. «Ձահաւոր եւ զսարսափելի գիրկական զխորհուրդն»:

9. Փ. Ս. «Ընդ նմին եւ զմեղսսէր բանան» (էջ 742): Ծարական «Ի մեղսսէր բանաին»:

10. Փ. Ս. «Արհամարհելով զչար տանջանս եւ զմահ» (721): Ծար. «Արիարար ճգնեալ արհամարհելով զչար տանջանս եւ զմահ»:

Այս եւ նման այլ Յաւելուածները փոքր Սոկրատի մէջ, որոնք բովանդակութեամբ անշահ էին, ոճով թոյլ, կրկնաբանութիւններով հարուստ, ինքնուրոյն բառաթերքով, կ'ենթադրեն Սոկրատի Համաոտողէն տարբեր, ժամանակով անկէ կրտեր կ'մտա-

գիր մը: Եթէ ի վիճակի չենք այժմ զանիկա իր սեպհական անունովը կոչել, բայց կրնանք ժամանակը մերձաւորապէս մատնանշել, այս ինքն Թ. դարու երկրորդ կէսն կամ Ժ. դարու առաջին տասնեակը:

Փ. Սոկրատի աղերսը Մ. Սորենացոյ հետ նկատի պիտի առնեմ առանձին գլխով:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՓՐԵՏԻ ՍԵՇՄԵՆՆԳԼՈՒԹԵՐ ՊՈՐՊԷՆՈՍԻ ԺՍՄԵՆՆԿԵՆ ՄԻՆՉԵՒ ԱՐԵՐԱՑԻՈՑ ԱՅԹԵՐ ՀԵՎԵԼՈՒԹԻՒՆԸ

ԳՈՐԾ ՎԻԿՏՈՐ ՇԱՊՈՅԻ

(Շարունակութիւն):

Դէպ ի արեւելք երկու անցքերը կը տանէին Աղուանից աշխարհը, զորոնք բացած էին Արագոս եւ Կուր գետերու հոսանքները. մին կ'անցնէր Կամբէճ գաւառէն, միւսը՝ կը պաշտպանէին երկու շատ մօտ դղեակները Հարմոյիկա եւ Սեւմարա (Σεύμαρα) կամ Սեւամարա (Σευσάμαρα) ⁴⁶. Աղուանից աշխարհն արեւելքէն կը սահմանուէր Կասպից ծովով, որ նաեւ Աղուանից ծով կը կոչուէր հարաւակողման մէջ. երկիրը՝ ձիւրու արօտավայր մըն էր, բայց նաեւ մշակութեան ոտորման միջոցաւ — եւ նոյն իսկ անտառներու աշխարհ մը ⁴⁷: Աղուանք չէին հպատակած՝ ո՛չ Մարաց, ո՛չ Աքամենեանց եւ ո՛չ Մակեդոնացոց: Արեւմտեանց հետ առաջին անգամ լուրջ չիտում ունեցան Պոմպէոսի ատեն 65ին, երբ Միհրդատայ կողմնակից եղան ⁴⁸: Այն ատեն իրենց տոհմերը միակ պետի մը ներքեւ միացած էին: Թէպէտ եւ Պտղոմէոս Աղուանից աշխարհի մէջ քաղաքներու երկայն ցանկ մը կը դնէ, որոնց ա-

⁴⁶ Ստրաբոն, անդ. հմտ. «Աղուանից քաղաքի» (Αλβάνει πόλις), Պտղոմէոս՝ Ե, 8, 9. 11, 4:
⁴⁷ Հմտ. Tomaschek, Albani, Albania (Հանրագիտ. Պալլիս-Վ.):
⁴⁸ Հոռոմէական զօրավարին քարտուղարը Թէոփանէս ծանօթացուց այս երկիրը. իւր ծանօթագրութիւնները գործածած է Ստրաբոն (անդ.), Պլինիոս (Բն. Պատմ., 2, 29, 39). յաւելլու է՝ Ապպիանոս, Միհրդ. 103. Դիոն Կասիոս, 12, 54. Պոլևարքոս, Պոմպ., 34 եւ Անտ. 34:

մէնուն ալ հետքը կորսուած է, սակայն հաղիւ թէ փորձուինք հաւատք ընծայելու Պոլևարքոսի թուերուն, որուն համեմատ Պոմպէոս իւր զիմացը գտաւ 60.000 հետեւակազոր եւ 12.000 հեծեալ ⁴⁹: Այս աղբիւն ալ՝ ինչպէս Լաղերուն՝ միտունները կը տատանէին Հոռոմայեցոց եւ Պարթեաց, Պարսից եւ Բիւզանդացոց մէջ: Սակայն աւելի յօժարութեամբ կը նմանէին Արշակունեաց քաղաքական հաստատութեանց:

Աղուանք եւ Վիրք մանաւանդ շատ յարուած հետեւակազորք մը կը կազմէին ⁵⁰, որ շատ օգտակար օժանդակութիւն մըն էր լեռնային պատերազմի մը գործողութեանց ատեն, եւ որ անհաւասար կը մնար միայն լեռնալեռնային հանդէպ. վերջինքս այս առաջին պատերազմներու ժամանակ իրենց դէմ ունէին միջակ սպառազինութիւն մը, այն թեթեւ արգելքը՝ զոր հարուածոց դէմ կը դնէին անասնոց մորթերը, որոնցմով անոնք պաշտպանուած էին: Պոլևարքոս արձագանք կ'ըլլայ Վրաց մասին աւելի նպաստաւոր կարծիքի մը. սակայն նաեւ Աղուանից արդէն ծանօթ էին ռազմագիտական քանի մը զաղտնիքներ. Պոմպէոս մեծ դժուարութեամբ միայն կըրցաւ գետն անցնել. բարբարոսներն անոր արին ամբարշտուցած էին ծառի կոճղներու ցցապատնէչով մը:

Այսպէս ըսելու համար՝ ճամբաներ չկային հին Անդրկալիկայի մէջ ⁵¹: Այլեւայլ աշխարհներ հաղիւ մատչելի կը համարուէին. հետաքրքրական է Պրոկոպիոսի ձանձաղաց մասին պատմածը կարգալ ⁵²: Ասոնք, կ'ըսէ, անկախ կ'ապրէին, նոյն իսկ առանց կազմակերպեալ կառավարութեան, իբրեւ աստուածներ կը պաշտէին անտառներն ու անասունները. իրենց ապրուստը կը հայթայթէին զողութեամբ ու աւաղակութեամբ, չկարենալով մշակել առապարին ու անբեր

⁴⁹ Անդ. Այս մանրամասնութեան արժէքն ունի յաջորդն ալ. (35) «Կ'ըսուի թէ Ամազոնները կ'օգնէին բարբարոսաց, որոնք կատարելապէս պարտուեցան: — Այսչափ զօրաբաժին հանուած է երկրորդ ապստամբութեան ատեն ալ. Պոմպէոս զորք ունեցած կ'ըլլայ նախ 40.000 Աղուանից հետ, «որոնց մէջ մեծ նախճիր գործեց» (34) կ'ըսուի (1):
⁵⁰ Տակիտոս, Տարեգր., 2, 34. Սակայն Ստրաբոն ալ (ԺԱ, 14, 9, էջ 550 C) կը նշանակէ «օպառագէն» (κατάπρακτο գրահատր) Աղուաններ:
⁵¹ Ստրաբոն, ԺԱ, 13, 4, էջ 524 C: «δὲ δροῶν καὶ ἀνοδῶν (ընդ լեռինս եւ ընդ անկիս տեղիս). Պրոկոպիոս, Մամուկ Պոմ. 2, 26 δύσοδος τε γὰρ . . . ἢ Ἀαλιχὴ ἔσσι καὶ ἄλλως κορυμνῶδες. (զի Լաղիկէ անդաց է եւ լի գահաւանդակօք):
⁵² Վասն Շին., Գ., 6, էջ 257—258:

հողը, եւ մշտապէս ձմերուան մը տակ տառապելով: Առաջին անգամ Յուստինիանոս զատուք այս անհամար մեծութեանն աղատած կ'ըլլայ, կտրել տալով բոլոր ծառերն որ անցուղարձը կ'արգելէին, ճամբաներ բանալով նոյն իսկ հեծելազորու զնդերուն համար ⁵³, այս հեռաւոր երկրին մէջ չինեց դղեակներ (castella), ուր հոռոմայեցի պահակազորքեր կը բանակէին: Սակայն նկարագրութեան այս պատկերին մէջ ապահովապէս այլեւայլ չափազանցութիւններ կան:

Նաեւ հին Հայաստանի մասին պատմութեան արժանի կէտ մըն էր որ Անտոնինոս յոյս դրած էր այն 10.000 հեծելոց վրայ, զորոնք Արտաւազը խոստացած էր խաւրել, եւ որոնց չզալուին՝ Անտոնինոս մեծ տաղնապի մէջ ինկաւ ⁵⁵: Ղուկուղոսի դէմ Տիգրան կը բերէր «55.000 ձիեր, որոնց 17.000ը զրահա-

⁵³ Դարձեալ Պրոկոպիոսի համեմատ՝ պարսիկ պետ մ'ալ նման ձեռնարկ մը գլուխ հանած է բոլորովին մերձաւոր գաւառի մը մէջ. «Անտարակոյս տեղիք կայ զարմանալու այս ջանասէր ազգին անխնայ համբերութեան վրայ, որ ճանապարհ հարթեց Վրաստանի ու Կողքիսի մէջ, որոնք յառաջ լի էին անտառներով, ապառաժներով եւ զահաւանդներով, այնպէս որ հաղիւ ամէնէն զիւրաթեք մարդ մը կրնար անցք մը գտնել, եւ ուր Պարսիկներն այնուհետեւ զիւրութեամբ կըրցան անցնել ձիերն ու փղեր» (Պտղմ. Գոթ., Ե, 13, 5):

⁵⁴ Ամբողջ աշխարհը կազմուած է իբրբու յաջորդող հովիտներէ, որոնք ընդհանրապէս նեղ են ու բարձրաւանդակ կողերով. դաշտերը ցանցաւ են, եւ մանաւանդ սակաւածաւալ: Բովանդակ արեւմտեան բաժնէն, որ միակն է որ երբեմն հոռոմէական հնազանդութեան ներքեւ մնաց, միայն երկու դաշտեր կրնան յիշուիլ, Կարնոյ դաշտը՝ որ շատ անկանոն է եւ միայն երկու հովիտներու լայնացումն է, եւ Երզնկայի երկայն դաշտը, որուն լայնութիւնը տեղ մ'ալ տասը քիլոմետրը չ'անցնիր. հմտ. Wilh. Strecker, Beiträge zur Geogr. von Hocharmenien ի Zeitschrift der Ges. für Erdkunde zu Berlin IV, 1869, p. 145—156, Տխտ. Գ—Դ: Թէկիւ հովիտներու անբարւ բաւեղ մը կը կոչէ (Reclus, Nouv. géogr. univ. Paris, IX, 1884, p. 326) եւ Լինչ կը կրկնէ նոյն բացատրութիւնը (Բ, էջ 395): Աւելցնելու է Ստրաբոնի (ԺԱ, 14, 15, էջ 532 C) Տիգրանի համար պատմածը թէ «նախ պատանդ էր Պարթեաց քով, յետոյ անոնցմէ վերադարձաւ՝ որոնք իբր վարձք ստին Հայաստանի եօրանաւանդ հովիտները (Ααβοντων µισθόν ἐβδομήχορτα αὐτῶν αὐτῶν εἰς Ἀρμενίας). Հովիտ մը կրնայ կամայականօրէն հաստատուելու բաժնուիլ, բայց մտացածին այս թիւր լուի կերպով կը պատկերացնէ երկրին կերպարանակազմութիւնը: Ստրաբոն կը յաւելու (ԺԲ, 12, 4, էջ 522) թէ հոն «լեռնականներու անսահման փոքրիկ ցեղեր կային, որոնք կ'ապրէին մեծաւ մասամբ աւարտութեամբ ու աւաղակաթեամբ»:

⁵⁵ Պոլևարքոս, Անտ., 50:

Handwritten notes in Armenian script, including the name 'Մանուկ Գ' and other illegible text.

պատ էին»՝ ինչպէս անոնց հեծեալները, որոնք նիզակ կը գործածէին⁵⁶: Զ. դարուն վերջը Մաւրիկ կայսեր օրով ալ նոյն հռչակն ունէր. ինքնակալը հրամայեց ամբողջը դօրահան ընել եւ իբրեւ երկրին վրայ դրուած կանխիկ հարկ կը պահանջէր եւ կը պատրաստուէր Թրակիա խաւրել⁵⁷:

Սակայն երկրին կազմութիւնը լաւ չէր յարմարէր այս գնդերուն ազատ շարժմանց: Ղուկուղոս ասոր փորձն առաւ, երբ աշնան դիշերահաւասարութենէն անմիջապէս ետքը «Զիւր ա՛լ խմելու ջուր չէին գտներ սառուցապատ գետերէն, եւ սառոյցն որ անոնց ամբախներու տակ կը խորտակուէր, իւր սուր բերաններովը կը կտրէր անոնց շղերն ու սրունքները: Երկիրն՝ որ գրեթէ ամէն կողմ անտառապատ էր, միայն նեղ շաւիղներ ունէր, ուսկից զինուորները չէին կրնար քալել առանց ձեան մէջ թաթախելու. գիշերները կ'անցընէին խոնաւ ու տղմոտ տեղեր»⁵⁸. այն տեղ՝ ուր դաշտ մը կը պարզուէր, թանձրախիտ եղեգնուտներ զանի կը ծածկէին⁵⁹:

Բայց Հայաստան չափազանց նպաստաւոր էր ձիարուծութեան համար, ճիշդ ինչպէս հիւսիսակողման Ատրնպատական Մարաստանը, որ իրենց շարունակութիւնն էր եւ իրեն կը նմանէր⁶⁰: Ուստի բնակիչները բնականապէս զաղափար յղացան այն աղբիւրէն օգտուել, ո՛չ միայն տնտեսական կենաց այլ նաեւ զինուորական պաշտպանութեան համար. յատկապէս «Կոմիսենէ» (Κωμισσηνή) եւ «Ուրքիստենէ» (Մορχιστηνή) գաւառները պատերազմիկ նժոյգներու մեծ քանակութիւն մը կը մատակարարէին⁶¹: Բաց աստի եկամուտ մը ստանալ կարելի էր այս հեծեալազօրը վարձու տալով, զոր օտար բանակները կը վարձէին պատերազմի ուրիշ ասպարէզի մը վրայ գործածելու համար:

Բաց աստի Պարթեւաց ազդեցութիւնն, որոնք յանդուգն ձիւորներ էին, անտարակոյս մեծապէս նպաստեց Հայոց զինուորա-

կան հաստատութիւնները կազմակերպելու, որոնք կ'երեւայ թէ անոնցմէ առած են նաեւ իրենց տարազն եւ իրենց սպառազինութիւնը⁶², ինչպէս իրենց լեզուին մէջ՝ որ թրակեան էր ծագմամբ, մուծած են բազմաթիւ երանեան բառեր⁶³:

Հազիւ կրնանք հաւատնալ թէ այս գաւառներու մէջ՝ որ այսօր ա՛յնպէս ինկած են, մարդայարդարութիւնն ու ռազմագիտութիւնն այնպիսի զարգացման հասած էին, որուն բացարձակ եւ միաբան վիպութիւններ կ'ընծայեն պատերազմաց նկարադրու-

⁶² Պատկերազարդ յիշատակարան մը չկայ որ նոյնը մեզի ցուցնէ: Չենք կրնար վստահել Հայաստանի այն սլայմանադրական անձնաւորման՝ որ պատկերազարդ է Հոմերի մէկ խորաբանդակին վրայ (P. Bienkowski, De simulacris barbararum gentium apud Romanos, Cracoviae 1900, p. 61, 64—66, fig. 54). Աւգոստոսի ժամանակէն ցանցաօր դրամներ կը ներկայացնեն հայ պատերազմիկ մը յատի, նիզակ բռնած, բայց կ'երեւայ թէ մերկ: Յետակողմը՝ աղեղն պատկանդարանի (corytus) մէջ (E. Gabrici, Studi e materiali V. I. I. I., տպ. Փրոքեմիտա, II, 1902, p. 151, fig. 4—5). Հայոց դրահաւորաց մասին հմտ. Մալուստոս, Պատմ. Մնաց., 64—66 (Maurenbrecher, I, p. 181—182) «եւ զհնա զայն հեծեալք սրատողէնք, ... եւ ձիոց նման սպառազինութիւնք էին... որք յառաջն խաղալին, հեծեալք զբահայտաք; համակի երկաթի կերպարանօք» են (equites catafracti, ... equis paria operimenta erant... equites catafracti, ferrea omni specie...):

⁶³ Հոս իրողութիւն մը կայ, որուն չէ յատկորէն անդրադարձած Ստրաբոն, վասն զի Հայոց աղբային տարազը նկարագրելէն յառաջ, որ կը բաղկանար երկայն պարկեզօտ մը՝ որ կը իջեցընէր ողբերգակ դերասաններու սփռնաւոր պատմուճանը (ԹԱ, 14, 12, էջ 530 C) կը գրէ այսպէս. «Մարաց սովորութեանց մեծաղոյն մասը կը գտնուի նաեւ Հայոց քով, յայտնապէս երկու աշխարհներու նմանութեան պատճառաւ: Կը կարծեն թէ Մարք եղան Հայոց առաջին կրթիչները, ինչպէս եղած էին Պարսից ալ: որովհետեւ երկայն պարկեզօտը խոյրը (xild. e s tiara), թաղեայ արտախորակը (ziles, pileus) թեղանաւոր պատմուճանը (χειροιδωται χιτωνες), manicatae tunicae). եւ անդրափարտիք (ἀναξυρίδες, anaxyrides sine bracciae, շալվար) լաւ եւ միայն ցուրտ երկիրներում համար: Պարսիկները զատնք ընդունեցան իրր աւելի վեհաշուք հանդերձներ, եւ հրոժարեցան իրենց կարճ ու թեթեւ զգեստներէն» (ԹԱ, 13, 9, էջ 525 C): Ընդհակառակն այս տարազը կը յարմարէր ցրտոյ ու սոթի այն տարապայման բարեխառնութեանց՝ զոր Երանի ժողովուրդներն ալ նոյնչափ կը ճանչնային՝ որչափ Հայերը: Ասոր աւելի երաւամբ կրնար հակադրուել Միջագետաց կլիման. բայց Ուոհայաստանի իշխաններուն համար Գ. դարուն դրոշմուճ ալիւսայլ դրամներ (Victor Langlois, Numismatique de l'Arménie dans l'antiquité, Paris 1859, pl. VI, n. 6—9). նաեւ այս երկրի մէջ նոյն արեւելեան զգեստին գործածութիւնը կը ցուցնեն երկայն պատմուճան եւ լայն անդրափարտիկ՝ որ սլեզներուն քով խորշխորչան է: — Տարազի այս խնդրոյն մասին. հին աւանդութիւնը միակերպ չէ. Յուստինոսի քով (ԽԱ, 1—2) կը կարդանք «Պարթեւները սկիւթացի քարտրականներ են, ինչպէս կը նշանակէ իրենց ա՛նունք սկիւթարէն լեզուաւ. իրենց երկրին մեծաղոյն մասը շատ տաք է եւ շատ սրտ: Յառաջ շատ տարբեր յատուկ զգեստ մ'ունենին. բայց յետոյ ընդունեցան Մարաց քափանցիկ ու քեթի տարազը. իրենց զէնքերը Սկիւթացոց զէնքերն են»:

⁵⁶ Անդ, Ղուկ. 26, 28. հմտ. 31: Արտաւազը Հայոց թագաւորը Կրասոսի բերաւ 6000 հեծեալներ եւ խոտաջաւ տալ 10.000 ալ (Պղոս., Կրաս. 19):
⁵⁷ Frédéric Macler, Hist. d'Héraclios par Pénéque Sébéos, trad. etc., Paris 1904, p. 35—37, 54 (հայ բնագիր՝ 47—48, 51—52 եւն):
⁵⁸ Պղոստարբոս, Ղուկուղ. 32:
⁵⁹ Մալուս, Թրգմ. Սերէոսի, էջ 31, 143 (հայ բն., էջ 26):
⁶⁰ Ստրաբոն, ԹԱ, 13, 7, էջ 525 C. 14, 9, էջ 529 C:
⁶¹ Ստրաբոն, ԹԱ, 14, 4, էջ 528 C:

թիւները: Կորդուաց աշխարհին մէջ, որ վերին Տիգրիսի սահմանակից էր, բնակիչները «հռչակաւոր էին իրրեւ ճարտարապետներ, անհամեմատելի զինուորական ճարտարագէտներ, հռչակ մը՝ որուն համար Տիգրանի գանոնք իրրեւ նոյնպիսի կը գործածէր⁶⁴»: Այս արքայն իրեն հետ կը տանէր սահլիւրաներ՝ ճամբաներ բանալու, կամուրջներ ձգելու, գետեր մաքրելու, անտառներ կտրելու եւ ուրիշ կարեւոր գործեր կատարելու համար. ասոնք թուով 35.000 էին եւ բանակին վերջապահաց մէջ դատուած⁶⁵:

Պղոստարբոսն կ'իմանանք դարձեալ թէ Հայոց դիւրին էր Անդրկալկասի ամէն աղբերուն վրայ գլխաւորութիւն մը ձեռք ձգել ու պահել եւ գանոնք գործածել նոյնպէս իրրեւ օգնականներ իրենց սեպհական օգտին համար: Յետոյ պիտի տեսնենք այն քաղաքականութիւնը, զոր այս երկրիս նկատմամբ գործադրեցին երկու ախոյանակից մեծ պետութիւնները, եւ այն համաձայնութիւնները՝ զորոնք նոյն խնդրոյն նկատմամբ կուեցին: Բիւզ մ'անթափանցելի կը մնան Հայոց զգացումները հանդէպ Արեւմտեանց կամ Պարսից: Այն ընթացքն՝ որով վարուեցան Յունաց հանդէպ, զիրենք վերջնոցս ատելի ըրած էին⁶⁶: Բիւնախնդրութիւնները կ'երեւայ թէ կրկայն ատեն տեսցին. Զ. դարու վերջը, Պարսկաստանի գահուն թիկնածուաց մրցակցական սլայքարներու ատեն Հայք ալ՝ ինչպէս կը պատմէ իրենց պատմագիրներէն մին Յովհ. Մամիկոնեան, կողմնակից եղան Սոսրովայ, եւ խաւրեցին 30.000 հոգի՝ որոնք պիտի միանային 70.000 Բիւլանդացոց հետ. բայց միայն Հայք եղան որ յաղթութիւնը տարին, որովհետեւ Յոյնք իրենց արժանապատուութենէ վար համարեցան Հայոց հետ մնալու. ուստի քաղաքացան անջատեցան եւ թշնամոյն չհասան⁶⁷:

Ի սկզբան թէ՛ Հոռոմայեցիք եւ թէ՛ Պարթեւք հաւասարապէս կ'աշխատէին գլխաւոր

(նախարարական) տանց պետերը սիրաչափ: Բայց յետոյ կ'երեւայ թէ Հայաստան նուազ ազնուապետական եղած էր. գոնէ պարսկական իշխանութեան ներքին նախարարք կանոնաւորապէս դուրս կը թողուն Տէրութեան գործքերէն: Ասոր փոխարէն անոնք կը շարունակեն իշխել բանակին վրայ, յատկապէս հեծելոց տանուտէրական (աւատական) գնդեր կազմել: Սերէոս կը հաղորդէ գանդատանաց թղթի մը պատճենը՝ զոր Մաւրիկ կայսրը գրել տուած խաւրած էր Պարսից թագաւորին հայ նախարարներու եւ անոնց գնդերուն դէմ. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորին: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ զօքս յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանդէպ ոչ լինի⁶⁸»:

Պէտք է ընդունել թէ Հայաստանի թագաւորաց դիրքը շատ դժուարին էր: Ամմիանոս Մարկեղոս⁶⁹ կը ներկայացնէ մեզի Արշակ արքայն՝ Տիրանի որդին՝ իրրեւ հաւատարիմ Հոռոմայեցոց, ընդդէմ պարսկական ամէն թելադրութեանց: Մովսէս Սորենացի⁷⁰ ընդհակառակն զինքն իբր բիւզանդական կայսրութեան արհամարհող կը նկարագրէ: Այս երկու վճիռներուն մէջ ալ ճշմարտութեան մաս մը տեսնելու ենք: Կրնար ոմանց քով համարուել իբր Հոռոմայեցոց համակրող, եւ ուրիշ տեղեր կասկածուիլ թէ պարսկասէր ըլլայ⁷¹: Այս արքայք իրենք զիրենք սաստիկ նեղուած կը զգային, տազնապալից ձգձգուած ըլլալով թէ՛ մէկ եւ թէ՛ մէկալ կողմանէ. կ'ամուսնանային մերթ յուսական իշխանուհիներու հետ եւ մերթ պարսիկ տիկնանց հետ, եւ երկու ցեղերուս այս ազգախառն խնամութիւնները փոփոխակի կարգաւ կը նպաստէին իրենց միտութեամբք այս եւ այն կողմ տատանելու, եւ ասով իրենց համբաւին հակասական երեւոյթ մը կուտային: Անխոհեմ կ'ըլլար ամբողջ հայ ազգը դատել իւր արքայից վարմունքէն, որոնք

⁶⁴ Ստրաբոն, ԹՁ, 1, 24, էջ 747 C:
⁶⁵ Պղոստարբոս, Ղուկուղ. 26: — Մճրնի մէջ Տիգրանայ Գուրաս եղբայրն իւր քովն ունէր կալիմարոս անուն անձ մը, որուն իրականին թողուցած էին իշխանութիւնն իւր զինուորական քաջափորձութեան եւ մեքեմայազիւտ հարստարութեան համար (անդ, 32): Անունէն կրնար հետեցուիլ թէ Հայաստանի ժապարկեան մէջ մտած յոյն վարձեկան մ'ըլլայ:
⁶⁶ Պղոս., Ղուկուղ. 21:
⁶⁷ V. Langlois, Historiens de l'Arménie, I, p. 363—364.
⁶⁸ Macler, անդ, p. 30—31 (հայ բնագիր՝ Պետեր. 1879, էջ 45—46):
⁶⁹ Ամ. Մարկեղ. Ի, 11, 1:
⁷⁰ Մ. Սոր. Գ, ԺԹ:
⁷¹ Weber, Die katholische Kirche in Armenien, p. 242.

ընդհանրապես կ'ընդունուէին՝ եթէ ո՛չ կը տրուէին՝ երկու պետութեանց միոյն կողմանէ ընդդէմ միւս կողմին⁷² : Անո՛ր համար որ Հռոմէական ղէնքերը զՏրդատ Հայաստանի դահուն վրայ դրած էին, վերջինս Գ. դարու վերջն իւր յաճախակի արշաւանքները կատարեց մինչեւ Տիգրոսի կողմերը⁷³ :

Կրօնքն ալ առանց ազդեցութեան չմնաց Հայոց արտաքին յարաբերութեանց վրայ . Տրդատ՝ քրիստոնէութեան դառնալով Ս. Գրիգորի Լուսաւորչի ձեռք, քրիստոնէութիւնը պարտաւորիչ ըրաւ իւր հպատակաց հրով ու սրով . սաստիկ տժգոհութիւն մը ծագեցաւ ասկէ շատերուն քով⁷⁴, զոր Պարսիկք ալ աւելի զրգռեցին, եւ արդիւնքն եղաւ հուղիհարական պատերազմ մը հռոմէական սահմաններուն վրայ⁷⁵ : Բայց քրիստոնէական հոսանքն աւելի զօրաւոր մնաց Հայաստանի մէջ . եւ այսպէս երբ Յուլիանոս «Ուրացող» իւր պարսկական պատերազմին համար այս կողմանէ օգնութիւն խնդրեց, խուլ ընդդիմութեան հանդիպեցաւ⁷⁶ :

Եարմուկի ձակտամարտին մէջ, որով Ասորիք Արարացոց ձեռքն ինկաւ, բիւզանդեան բանակին մէջ հայ զօրաբաժին մ'ալ կար . ասոր ձեռնթափութիւնն էր որ՝ մահմեական հեղինակի մը համեմատ՝ Յունաց պարտութեան պատճառ եղաւ⁷⁷ : Վերջ հաւատարիմ մնացին քրիստոնէական կողման . բայց Հայոց մեծագոյն մասը յօժարակամ հնազանդեցաւ տիրապետութեան «արքային

⁷² Միհրդատ՝ վրաց արքային եղբայրը (Տակիտ., Տար., ԺԲ, 44) այս միակ պատճառաւ հաստատուն բարեկամ մնաց Հռոմայեցոց : Չուտ անձնական համակրութիւններ կրնային յառաջ գալ նաև իշխանին յատուկ կրթութենէն . այսպէս նշանաւոր եռանդ մը տեսնուեցաւ Պարթևաց մեծ ամուսնուհառ մը (աւատարար) քով՝ Ագատ (Եղատէս) արքային Ագիարենաց եւ Կորդուաց աշխարհին, Կղազիտոսի օրով . եւ Ագատ Հռոմէացոց զինուորական գրութեան մեծ հիացող մըն էր (Յովսէպոս, Տար. Հր., Ի, 70) : Իւր հինգ որդիները Հռոմ խաւրած էր նոյն գրութիւնը ստովելու եւ անոր թափանցելու :

⁷³ Մ. Պոր., Բ, 4թ (վերջը) . Ագաթանդեոս, 55 (հայ բնագիր վեհա.՝ 1835, էջ 99—100) . Կակտանափոս, Վասն մահ. հարած., 9 (Lactant., de mort. pers.) :

⁷⁴ Մ. Պոր., Գ, Բ. Բուզանդ, Գ, Ի. Ագաթանդեոս, 110—132 (տես հայ բնագիր, էջ 579 եւն եւն) :

⁷⁵ Յուլիանոս, Ճառ Ա, 19 A :

⁷⁶ Նոյն, Թուղթ, 67 : Կը գրէ Արշակայ. «Գիտեմ թէ խորամանկ ես, յոյժ զինուոր եւ անձնապարծ, եւ ներկայ իբրեք դասի կ'ապացուցանեն . որովհետեւ ծածուկ ապստամբ կ'այլապիսեա հասարակաց օգտի թշնամու մը, եւ թէ պատերազմին ելքին կը սպասես՝ դեկ որդիսէն յառաջ...» :

⁷⁷ Հմմտ. Macler, Sébéos, p. 96 (հայ բնագիր) :

Իսմայէլի»՝ ինչպէս զայն կ'անուանէին⁷⁸ : Սակայն այս տիրապետութիւնն ապահովեալ էր եւ անխուսափելի . ուստի չենք կրնար չափազանց քննադատել Հայերը թէ ինչու իրաց այս վախճանը փութացուցին :

Հայաստանի եւ յատուկ մտօք Ասորուց աշխարհին մէջ ժամանակ մը գոյութիւն ունէին երկու մանրակերտ վեհապետութիւններ, Կոմագլինեայ եւ Ուռհայաստանի տէրութիւնները : Առաջնոյն հելլենասիրութիւնն աշխարհածանօթ էր⁷⁹ : Շատ քիչ անձինք ա՛յնպէս զիւրախար էին հաւատալու այն դաւին՝ զոր իբր թէ Կեսեներոս Պետոս (Caesennius Poetus)՝ Վեսպասիանու օրով՝ կըրցաւ երեւան հանել . երկիրը պարզապէս ուլիովին պետութեան հետ միացընելու համար պատրուակ մը պէտք էր⁸⁰ : Բոլորովին նոյնպէս չեղաւ Ուռհայաստանի մասին . Եփրատ կը սահմանէր նոյն երկիրն արեւմտքէն . եւ Արգարներու հարստութիւնն կրնար ինք զինքը քիչ մ'ապահով զգալ այս սահմանադիտոյն ետեւը : Այս իշխաններն ասով քանի մ'անգամ երկրիմի դեր մը խաղացին Հռոմայեցոց եւ Պարթևաց միջեւ⁸¹ . երբ Տրայանոս ահազին բանակով մը կը մերձենար՝ այս արքաներէն մին բոլորովին ալ անտարբեր մնաց⁸² : Նոյն իսկ Սեպտիմոս Սեւերոս թողուց որ այս թագաւորութիւնն իւր

⁷⁸ Յամի 651 կամ 653. Macler, անդ, p. 132—134 (հայ բնագիր, էջ 138) . Արարացի իշխանը Հայոց կ'ըսէ . «Հեծեալ կայէք յաշխարհիդ ժե . հազար... եւ զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլուր եւ հրամայեմ՝ պատրաստ լիցին ի դործ» :

⁷⁹ Միայն քաղաքային պատերազմաց ժամանակ՝ Անտոնինեայ արշաւանաց ատեն՝ Անտիոքոս արքայն փախստական Պարթևաց ապստամբ առաւ . սակայն նաև յօժարակամ գտնուեցաւ ինքզինքն այս սուղտանքին սրբիւր . Հռոմայեցիներէն խաղաղութիւն գնելով : Հմմտ. v. Gardthausen, Augustus und seine Zeit, Leipzig, I, 1 (1891), p. 237.

⁸⁰ Գիտն Կաս., ԿԶ, 11. Յովսէպոս, Պ. Հր., Է, 219—243 : Վերջին արքայն կամակար մանակցած էր Երուսաղեմի պաշարման . բայց ասի արգելք մը չեղաւ որ իւր զահրենկեցութիւնը հռչակուի (72ին) . Հ'երեւար թէ զիմարած ըլլայ ասոր . արձանագրութիւն մը՝ որ նորերս Բայբէք գտնուեցաւ (Th. Mommsen, in Sitzungsbericht d. Berliner Akad., 1903, p. 817—824) կը տեղեկացընէ թէ նոյն իսկ պարզ հարեւրապետ մը պատուէր ստացաւ՝ երթալու փնտնելու գտնելու անոր երկու որդիները, որոնք Հռոմ կոչուած էին՝ այն տեղ իրենց հօր պէս իբր պարզ անհասանք ընակելու :

⁸¹ Գիտն Կաս., Խ, 20 : Gutschmid, Gotarzes (in Kleine Schriften, III, 1892, p. 86).

⁸² Գիտն Կաս., ԿԸ, 21 : Նոյնը պատկերացած կը գտնենք հիւպատակամ գարդարաւի (ornamenta consularia) զգեցած՝ իբրև ձեռնական իշխան եւ բարեկամ ինքնակալ, որոնց կողքին կեցած է, Բէնէյէնտի յաղթական կամարին խորաքանդակներուն միոյն վրայ (տես „Westdeutsche Zeitschrift“, XIV, 1895, Տխտե, պակ. 1) :

գոյութիւնը շարունակէ⁸³ . երբ անխտանութիւն ունենային ասոր մասին՝ կը դժանդային յատուկ գործակալներ կարգելով անոր վրայ⁸⁴ : Թագաւորները միացեղ ազգի մը չէին իշխեր հոն . ազգաբնակութեան զլիսաւոր բնախաւը նարատացի էր, բայց ազգադրական այլեւայլ տարբեր հոն իրարու կը խառնուէին :

Նոյնը կրնանք ըսել Պորին Ասորուց եւ Պարթևոսի թագաւորի իշխանութեանց մասին, որոնք ուշ կամ կանուխ կլլուեցան Ա. դարուն Յ. Բ. ընթացքին մէջ⁸⁵ եւ մեծաւ մասամբ երկիւս աշխարհագրական սահմաններէն դուրս կը մնան : Քիչ մը նշանաւոր քաղաքները կը պարունակէին հռոմայեցի քաղաքացիներ կամ վաստակաւոր զինուորներ՝ որոնք բանակին մէջ երկար ատեն ծառայելով հռոմայացած (հռոմայեցոյ իրաւունք ստացած) էին, Յոյն՝ որոնք սերունդ էին այս երկիրը փոխադրուած Մակեդոնացոց, կամ բնիկներ՝ որոնք Սելեւկեանց ատեն հելլենացած էին : Այս երկու խմբերը՝ որոնք նախնաբար բոլորովին հեթանոս էին եւ յետոյ քրիստոնէայ եղած, եւ իրարու հետ գրեթէ հաւասարաչափ քանակութեամբ էին, առաջին երեք դարերուն մէջ յաճախ կը ներկայացընէին Ասորիքի տիրող ու գերիշխան ազգը :

Պէտք է մէկզի գնել Հրեայները, որոնք երկայն ժամանակ միաձոյլ հոծ կորիզ մը կը կարմէին Պարթևոսի մէջ, բայց յետոյ ցանուցելու սկսեցան Արքիանու օրով իրենց ասպտամբութենէն ետքը⁸⁶ : Բաւական թիւ մը մնաց Ասորիքի այլեւայլ տեղերը . բայց աւելին Միջագետք զալթեց՝ արդէն այն առաջին հապատերազմին . եւ ամէն առիթ ձեռք կ'առնուին՝ ցուցընելու իրենց թշնամութիւնը Հռոմայեցոց դէմ⁸⁷ : Շատ կանուխէն՝ հասարակապետութեան ժամանակէն ի վեր՝ զաղտնի մեքենայութիւններ լարած էին Պարթևաց հետ ի միասին⁸⁸, որոնք հոմեմէական սաստկարուն տիրող գորութեան

⁸³ Eckhel, D. N. V., III, p. 511, 516. Յետոյ անհետ եղաւ :

⁸⁴ CIL, II, 4135; XII, 1856.

⁸⁵ Տես իմ յօդուածս Provincia in provincia Dictionn. des ant. gr. et rom., հրտ. Darenberg-Saglio-Pattier (1906).

⁸⁶ Եւսեբիոս, Պատմ. Եկեղ. Գ, 6 :

⁸⁷ Հմմտ. J. Salvador, Hist. de la domin. rom. en Judée. Paris 1847, II, p. 530.

⁸⁸ James Darmestetter, Les Parthes à Jérusalem (in Journ. Asiatique, 1894, II, p. 43—54).

հանդէպ՝ իրենց իբրև բարեկամներ կ'երեւային : Պարթևագահաւորութիւնն իրենց աչքին անչափ կախարդանք մ'ազդեց, որ նաև այլեւայլ պատրանքներէ ետքն ալ տակաւին շարունակեց հմայել⁸⁹ : Զվարանեցան՝ Տրայանոսի արեւելեան պատերազմին ատեն՝ լայնածաւալ ասպտամբութիւն մը յարուցանել, որ կը տարածուէր մինչեւ նաև Միջագետք, զոր սակայն ինքնակալական տեղակալը Լուսիոս Կուիտոս (Lusius Quitus) ծայրայեղ խստութեամբ սանձեց⁹⁰ : Այս երկրիս մէջ բազմախուս յաճախութեամբ կը գտնէին Ս. Գրոց յիշատակները . Ազրիպատս Ա. արքային իւր դեսպաններով⁹¹ Կալիգուլայի կը յիշեցընէր թէ Հրեայք Անդր-Եփրատի ամէն բազմամարդ քաղաքներուն մէջ կը դրանուէին : Յետոյ աւելի ալ յոռի եղան իրերը : Եթէ Պարթևներն այս ազգին համար ամենեւին չէին ուղեր իրենց սահմաններէն դուրս իրենք զիրենք վտանգի մէջ դնել, սակայն ասոր փոխարէն համակարգի ընդունելութիւն մ'ըրին հրէական պատերազմին դահերուն : Ի միջի այլոց Մծբին քաղաքը տարագրելոց մեծ բազմութիւն մ'ընդունեցաւ :

Անտարակոյս Հրէից խուլ հնարից հետեւութեամբն էր որ, ինչպէս որ կը պատմէ Յեսուայ Սիւնակեցի անուամբ ներկայացող Ժամանակագրութեան անանուն հեղինակը, Միջագետք մէջ քաղաքական կարծիքն ընդհանրապէս աննպաստ էր Հռոմայեցոց . գոնէ իրենց մատնութեամբն էր որ Կոստանդիա քաղաքը քիչ մնաց պիտի առնուէր՝ Անաստաս կայսեր օրով⁹² : Զ. եւ Է. դարուն ասոնք որոնք եւ կանոնաւոր հակառակորդներ են : Յամի 530 Պարսից արքային ապաւինող 30.000 Սամարացիներն են, զորոնք կայսրն իրենց ասպտամբութենէն ետքը պատժած էր, որ զրդուցին Կաւաստ արքայն վեր-

⁸⁹ Բակուր անգամ մը միջամտից Անտիոքոսի զօրավիզն օղնական կանգնելով ընդդէմ Հերովդէսի որուն պաշտպան էին Հռոմայեցիք (Յովսէպոս, Պ. Հր. Ա, 248 եւն) . բայց վաղարջ 70ին մերժեց ձեռնաւ ըլլալ Հրէից ընդդէմ Վեսպասիանոսի, որուն ասպարիկեց իւր օգնութիւնը՝ թէև ատանց յաջողութեան :

⁹⁰ Եւսեբիոս, Եկեղ. Պատմ. Գ, 2. Որոսիոս, Է. Գիտն Կաս. ԿԸ, 22. J. Derenbourg, Essai sur l'hist. et la géogr. de la Palestine, Paris 1867, p. 404.

⁹¹ Փիլոն, Պատմ. առ Կայսրոս, 36, էջ 587 հրտ. Mangey :

⁹² Chronique de Josué le Stylite, écrite vers l'an 515, texte et trad. par l'abbé Paulin Martin, Leipzig 1876 (in Abh. für die Kunde des Morgenlandes, herausgegeben von der Deutschen morgenländischen Gesellschaft, VI, 1), p. 59.

սկսելու պատերազմը, «խոստանալով իրեն մատնել տալ Ս. Տեղիքն՝ ուր բազմաթիւ իշխանական ընծաներ կը գտնուէին եւ մեծաբանակ ոսկի ու արծաթ եւ անհամար սպառուական քարեր»⁹³: Յետոյ Սոսրով արքայ հետեւեցաւ այս խորհրդին. այն ատեն Անտիոքի Հրեայք քրիստոնէից դէմ շարժում մը յառաջ բերին. սպաննեցին նոյն մայրաքաղաքին պատրիարքն ու հազարաւոր քրիստոնեայններ⁹⁴: Փոկաս ասոնց դէմ գնդեր խաւրեց, որոնք խստորէն զսպեցին. բայց ասով անոնք աւելի կատաղօրէն զայրացան. երբ Հերակղի օրով Պարսիկները մինչեւ Յորդանան հասան եւ Պաղեստինն այրացուցանելու ջանքերը շարունակեցին, Հրեայք անոնցմէ՝ իւրաքանչիւրն իւր կարողութեան չափով՝ գնեցին քրիստոնեայններն, որպէս զի անձամբ մեռցընեն իրենց զարշի քրիստոնեայ գերիները⁹⁵: Սակայն այս ճեղքաղբութիւնն ունէին թէ Փոկաս ուզած է զիրենք բռնի քրիստոնեայ ընել⁹⁶: Ուստի զիւրաւ կը հասկըցուի թէ երբ վստահացան թէ Արարացոց քով շատ աւելի մեծ ազատականութիւն պիտի գտնեն, յօժարաւոր ձեռնառու եղան նոր աշխարհակալներու կողման⁹⁷:

(Շարունակելի:)

Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

⁹³ Մաղազաս, ԺԸ, էջ 455 (Բոն):
⁹⁴ Թէոփանէս, 301, 1. Չոնարաս, ԺԴ, 14, 31 (Հրա. Büttner-Wabst). Եւտիքէս, Տարեգր. Բ, 212, 219. Կեղեկոս, Ա, էջ 712 (Բոն):
⁹⁵ Կեղեկոս, Ա, 715. սրբազրական բնագիրներն ալ շատ նման բան մը կը պատմեն. հմմտ. dom H. Leclercq, Les Martyrs, Paris 1905, IV, p. 207: — Սոսրով՝ որ կը բաղձար քրիստոնէից ալ համակրութիւնը վաստակել, աշխարհակալութենէ մեղքը՝ որուն համար կը յուսար թէ վերջնական ըլլար, շատ ճարպիկութեամբ շահագործեց այս փոխադարձ ատելութիւնը. տես Angelo Pernice, L'Imperatore Eraclio (P. Pubblicazioni del R. Instit. di studi superiori in Firenze, 1905, p. 74): Հրեայք անխոհեմ գտնուեցան Պարսկաստանի գահակալական կռիւներու մէջ խոտնուելու: Մերօր (Մահրուզ)՝ Սոսրովի Բ. տեղակալը սրէ անցընել տուաւ բազմաթիւ անձինքներ անոնցմէ՝ որոնք յիշեալ իշխանին դէմ ձեռնառու եղած էին վահրամայ: Հրեայք չափազանց շտապած էին Պարսկաստանի մէջ եւ մեծ հարստութիւն ձեռք ձգած՝ կ'ըսէ թէ փոխակալու Սիմոնիտոս (Ե, 7, 9). որ այս «անհաւատարիմ, անհանգիստ, ամբարտաւան, նախանձօրդ ու անհաշտ» ազգին պատժուիլը կը զրուսակէ:
⁹⁶ Հերակղ արդիւրած էր իրենց բնակիլ երուսաղեմի մէջ եւ անոր բոլոր շրջակայքն երեք մղոն շրջանակի մը մէջ (Թէոփանէս, 328):
⁹⁷ Մակելը, Սերէոս, էջ 68 (Հայ բն. էջ 81). «Յայնժամ ապա ամենայն երկիրն Պաղեստինացոց կամ մաւր հնազանդեցան ի ծառայութիւն արքային Պարսից, մահաւանդ մեացորդ ազգին Հերայեցոց»: Նոյնը կը հաստատեն մահմետական հեղինակները. հմմտ. J. de Goeje, Mém. d'hist. et de géogr. orient, Nr. 2: Mém. sur la conquête de la Syrie (Բ. Տպ.), Leiden 1900, p. 9 եւ 103.

ԵՐՐՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՒՍԹԻՆԵՆԸ ԲՆՈՒՆԵՐ ՀՅՅՅՐԵՆԻ ՄԷՋ

(Շարունակելի:)

Ա.

Արիւ «Թղթախաղի մէջ քանի մը քօղեր ունենալով, մի առ մի բոլորն ալ տալու գործողութիւնը» <Փրանս. atout «Թղթախաղի մէջ՝ տակը բացուած թուղթը եւ իւր տեսակը. տճկ. foq, ուուս. կօգեր»:

Ալաքուրֆա «ոչ-եւրոպական, արեւելեան կամ տաճկական ոճով». օր. Ալաքուրֆա սահաքը քանի՞ն է «ըստ թուրքաց ժամը քանի՞ն է» <իտալ. alla turca, Փրանս. à la turque. իտալերէնէ է նաեւ թրք. ԾՅՂՂՂՂ ala-turka նոյն նշ.:

Ալաման «չորս զոյգ թիով մեծ նաւ, յատկապէս ձկնորսութեան համար». նոյն նշանակութեամբ են նաեւ թրք. ԿՆՂՂՂՂ alama եւ նյն. ἀλαμάνα. անշուշտ իտալերէն է, բայց ճիշտ համապատասխան ձեւը չգիտեմ. հմմտ. թերեւս alla mano «առձեռն, զիւրաւ գործածելու յարմար»:

Ալամօտա «նորածեւ, տարօրինակ, արտասովոր» <իտալ. alla moda «ըստ նորածեւութեան». հմմտ. Փրանս. à la mode:

Ալապանա. հրամայական բացազանչութիւն՝ որ նաւալարներուն մեծը կու տայ՝ նաւը ետ դարձնելու համար = իտալ. alla banda! կազմուած alla յօդով՝ banda «կող (յատկապէս նաւի կող)» բառէն. ըստ այսմ բուն կը նշանակէ «ի կողն!»: Կայ նաեւ թրք. ԵՆՂՂՂՂ alabandı «յորձանք, վիժանք նախատանայ», որ սակայն վերինին հետ կապ չունի:

Ալաղա. հրամայական բացազանչութիւն՝ որ նաւալարներուն մեծը կու տայ զիմացէն եկող նաւին՝ որպէս զի աւելի հետուէն տանելով նաւը՝ իրար դարձուցուցնելու ջանքերն չենթարկուին. կամ հրաման՝ նաւը ծովին բացերը տանելու. նաեւ թրք. ԵՃՂՂՂՂ alarga «բացէն եկուր. 2. օն ի խո՛ր» <իտալ. alla larga «բացէն», հետուէն եկուր, հետուէն գնա». կազմուած alla յօդով՝ larga «լայն, լայնք, բաց տեղ, յատկապէս ծովին բացը» բառէն. հմմտ. Փրանս. le large «ծովին բացերը», au large! «ծովին բացերը երթա՛նք», alarguer «նաւը ծովին բացերը տանիլ»:

Ալալէրա «տակնու վրայ, խառնաշիթ, խառնադիւր. 2. խառնաշիթութիւն, տակնուվրայութիւն». թրք. եւս ԵՃՂՂՂՂ alavira «խառնակութիւն». երկուքն ալ խառնութիւնն ըլլալու են, բայց մայր ձեւը ինձ յայտնի չէ:

Ալափրանկա «եւրոպական, իբր հակառակ ալաթութեան». օր. ալափրանկա սահաք «եւրոպական ժամ»: (Ծաղրական լեզուով ամէն տարօրինակ բան կրնայ կոչուիլ ալափրանկա). թրք. ԵՃՂՂՂՂ alavrangca <իտալ. alla franca «ըստ Փրանսականին, իմա՛ ըստ եւրոպականին»:

Ալեարքուր «չոզեկառքի տոմսակ՝ թէ՛ երթալու եւ թէ՛ վերադառնալու համար» <Փրանս. aller-retour «երթալ-գալ»: — Հետաքրքրական է այն՝ որ այսպէս կը կոչուէին միայն չոզեկառքի տոմսակները, իսկ չոզեկառքին նոյնպիսի տոմսակները կը կոչուէին տաճկերէն բառով կիտիպ-կիլմէ կամ հայերէն բառով երթալ-գալ. ասոր պատճառն այն է որ չոզեկառքի վարչութիւնը եւրոպական է, իսկ չոզեկառքին ընկերութիւնը՝ տաճկական:

Ալէստա «պատրաստ». օր. ալէստա կայնէր է. այս իմաստով՝ իբր ամական՝ պելի գործածական է թրք. հազրը: Ծառ սովորական է՝ իբր միջարկութիւն ծառայող մարդոյ, ինչպէս՝ սրճարանի աշակերտներու եւն, իբր «պատրաստ եմ ծառայելու, ահաւասի՛կ եմ» նշանակութեամբ. թրք. ԵՆՂՂՂՂ alesta նոյն նշանակութեամբ <իտալ. alla lesta «անմիջապէս, իսկոյն, ճարպիկ՝ փութկոտ կերպով», որ կազմուած է alla յօդով lesto, lesta «թեթեւօտն, ճարպիկ, արագաշարժ» բառէն. իտալիոյ մէջ ալ ծառայներու բացազանչութիւնն է alla lesta! «ահաւասի՛կ եմ»: Մեր բառը յառաջացած է թերեւս all' lesta սղեալ ձեւէ մը: (Թուրքերէնէ փոխառեալ բառերու մէջ, էջ 62, այս բառին ծագումը դրած էի allestare «պատրաստել» բայէն, որ անշուշտ սխալ է):

Ալէվոս, ալէվոս «պօրոսցի խաղ արժէթութեանը ապագայ արժէքին վրայ», որմէ ալէվոսնի «այդ խաղով պարագող անձ». անշուշտ իտալերէն է, բայց մայր ձեւը չկըրցայ գտնել. կրնանք համեմատել levare, elevare, allevare «բարձրացնել»: Կարելի է նաեւ կարծել Փրանս. à livrer «յանձնելի» բառէն (ըստ Սաշիկ խան Սառաճեանի):

Ալիկուրնա «խառնակ՝ խառնաշիթ բան». ծագումը անյայտ է ինձ:

Ալիկարա «գրահալի, հանրահալի <իտալ. algebra, Փրանս. algèbre. բոլորն ալ կը ծագին արաբ. جبر jebr կամ الجبر aljabr ձեւէն. իսկ մեր բառը իտալերէնէն առնուած է:

Ալպօմ «մէջը լուսանկարներ դնելու յատուկ զեղակազմ գիրք» <Փրանս. եւ իտալ. album. որովհետեւ բանն անձանօթ է հինբուն, ուստի պէտք է որ առնուած ըլլայ Փրանսերէնէ եւ ո՛չ թէ իտալերէնէ. Փրանսերէն բառը հնչուելով albom, ճշտիւ համապատասխան է մեր ձեւին:

Ակոափ «անգլիական ծալուող զնդասեղ» <Փրանս. agrafe.

Անէնթա «չոզեկառքին ընկերութեան գործակատար. 2. չոզեկառքին ընկերութեան գրասենեակը». թրք. ԵՆՂՂՂՂ ajenta նոյն նշ. <իտալ. agente «գործակատար», agenzia «գործակալութիւն». մեր բառը կազմուած է երկուքի խառնուրդով՝ թէ՛ ձեւի եւ թէ՛ նշանակութեան կողմէ. հմմտ. Փրանս. agent «գործակալ», agence «գործակալութիւն»:

Անիօ «արժեթուղթերու արժէքի, ինչպէս նաեւ փոխանակազրբերու վճարման, փոխանցման, զեղչի եւ այլ սեղանաւորական գործողութեանց մէջ եղած շահը» <իտալ. aggio. ասկէ առնուած են նաեւ Փրանս. եւ անգլ.agio, նոյն նշ. մեր բառը իտալականէն է՝ քի ձայնին պատճառաւ:

Անօզ «գիշերային աման, միլիաման». կը թուի եւրոպական փոխառութիւն. բայց ո՛չ իտալերէնի մէջ կայ եւ ո՛չ նոր յունարէնի մէջ. թերեւս ըլլայ սպաներէն բառ, որ հրեաներու միջոցով անցած է: Զմիւռնիոյ հայերը նոյն նշանակութեամբ կը գործածեն ալյո, որ տեղական յունարէն բարբառն առնուած է:

Ամազօն «զուրկէն հագնելու իգական թեւաւոր վերնազգեստ» <Փրանս. amazone «կերպասեայ երկար կանացի շրջազգեստ՝ ձի հեծնելու համար»:

Ամարա «բժշկական դառն արմատ մը» (դեղագործական բառ) <իտալ. amara (իգ.) «զառն, լիզի»:

Ամէլիքա, Ամէլիքան «տեսակ մը հասարակ լաթ», թրք. آمرقان Amerikan-bezi «ամերիկեան կտաւ», Փրանս. toile d'Amérique <իտալ. America «Ամերիկա», americano «ամերիկեան, ամերիկական»: